ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 14-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում ավանդական շքեղությամբ կատարվեց Խաչվերացի տոնը։ Տոնի առթիվ Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Տաճարի գավիթն էին լցվել Հայաստանի զանազան քաղաքներից ու գյուղերից եկած բազմաթիվ ուխտավորներ։ Այդ օրը ուխտի մեծ օր էր հավատացյալների համար։ Ուխտավորներն իրենց հետ բերել էին մատաղացու ոչխարներ և աղավնիներ ու սկսած շաբաթ օրվանից, խմբերի բաժանված, զվարճանում էին եկեղեցու գավթում, Տաճարի շրջակայքում, այգիների մեջ, ծառերի ներքև։ Ժողովրդական երգն ու պարը թնդացնում էին օդը։

Կիրակի օր պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը, որն ավուր պատշաճի քարոզ խոսեց, վեր հանելով Խաչվերացի տոնի պատմական ու կրոնական նշանակությունը։

Երեկոյան ժամերգության ժամանակ կատարվեց Խաչվերացի պատմական մեծաշուք հանդիսությունը՝ մեծ «Անդաստանը» Տաճարի բակում։ Կազմվեց եկեղեցական մեծ թափոր, խաչով ու խաչվառով, որը դուրս գալով եկեղեցուց մեր հիանալի շարականների ու մեղեդիների երգակցությամբ, շրջեցավ եկեղեցու չորս կողմը։

Թափորը կանգ առավ եկեղեցու արևմտյան դռան զանգակատան մոտ։ Հանդիսադիր սրբազանը օրհնեց ուխտավոր ժողովրդին ու արձակեց։

***

Սեպտեմբերի 27-ին մեծավայելուչ հանդիսությամբ Մայր Աթոռում տոնվեց Ամենայն Հայոց Հայրապետի և մեր սիրելի Հոր՝ Նորին Ս. Օծության Տ. Տ. Գեորգ Զ.-ի գահակալության և անվանակոչության տոնը։ Ցնծության օր էր ամբողջ միաբանության, Հոգևոր Ճեմարանի ուսանողության և հավատացյալ ժողովրդի համար։

Շաբաթ օր Վեհափառ Հայրապետը, միաբանության ու սարկավագների առաջնորդությամբ, հանդիսավոր մուտք գործեց Մայր Տաճարը։ Պաշտվում էր սուրբ պատարագ։ Հավատացյալների բազմությունը լցրել է Մայր Տաճարը, գավիթը, շրջափակը։ Երգչախումբը երգում է այսօր հրաշալի կատարողությամբ։ Հանդիսավոր է ամեն ինչ։

Սուրբ պատարագից հետո կատարվեց Հայրապետական մաղթանք։

Մաղթանքից հետո բազմությունն ամենայն երկյուղածությամբ մոտենում է Վեհին, շնորհավորում է նրա անվանակոչությունը աջահամբույրով և հեռանում՝ մաղթելով նրան երկար կյանք և արևշատություն։

Նույն հանդիսությամբ միաբանությունը Վեհափառ Հայրապետին առաջնորդում է դեպի Վեհարան, որտեղ տրվում է ճոխ ճաշասեղան։ Բացի միաբանությունից, պատվո ճաշին ներկա էին նաև շատ հյուրեր մայրաքաղաքից։

Առաջին հերթին Վեհափառ Հայրապետը բարձրացնելով բաժակը դիմում է սեղանա-

կիցներին. «Ամենայն Հայոց Հայրապետի վերա դրած պարտականությունները շատ ծանր են. հայ ժողովուրդը մեծ հույսեր է կապում Հայոց Հայրապետի հետ և միշտ էլ սպասում այդ հույսերի իրականացումը տեսնելու համար։ Այդ հույսերն ու ծանր պարտականությունները այսօր ընկած են Մեր վերա. կաշխատենք անել Մեր կարելին»։

Այնուհետև բաժակաճառերով հանդես եկան Հոգևոր Ճեմարանի ռեկտոր տիար Մ. Մինասյանը, բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը. սարկավագության անունից հանդես եկավ Փայլակ սարկավագ Այնթաբյանը։

Կիրակի օրը ուխտավորների բազմությունն այնքան մեծացավ, որ Մայր Տաճարի գավիթը չէր բավարարում իր ընդարձակ շրջակայքով։ Հայկական երգն ու պարը, դհոլզուռնայի նվագը, ուխտավորների կանչը ականջ էին խլացնում։ Մինչև ուշ երեկո ուխտավորները զվարճանում էին։

Այդ օրը՝ սեպտեմբերի 27-ը, անմոռանալի կմնա միաբանության և ուսանողության հիշողության մեջ։